

## Քաղաքականություն

Վրաստանի հայերը կրկին կոչ են անում երկրի իշխանություններին ճանաչել Հայոց ցեղասպանությունը

Ապրիլի 13-ին ԱՄՆ Կոնգրեսում կհարգեն Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը

20-րդ դարի ցեղասպանությունների մասին գրքի հեղինակը կարող է պետքարտուղար դառնալ Հիլարի Քլինթոնից հետո

## ՀՀ սփյուռքի նախարարություն

ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացավ «Հայ կնոջ դերը Սփյուռքում» խորագրով կյոք սեղան

«Հայերի հետքերը Բրազիլիայում»

Կայացավ ՀՀ սփյուռքի նախարարին կից ատյանի հերթական նիստը

ՀՀ սփյուռքի նախարարություն այցելեցին սփյուռքահայ ուսանողներ

Շնորհանդես ՀՀ սփյուռքի  
նախարարությունում

«Ցավի, հիշողության եւ պայքարի  
կոթողներ»

## Սփյուռք

Կհնում ցուցադրվեց Ադրբեջանում Հայոց  
ցեղասպանության մասին վավերագրական  
ֆիլմ

Թուրք նախարարը վիրավորել է  
սփյուռքահայերին

«Ակոս» թերթը` Թուրքիայի  
խորհրդարանում

Ֆրանսիայի հայերն ու թուրքերը միասին  
կհավարվեն Փարիզի Կոմիտասի արձանի  
մոտ

Շվեյցարիայի հայոց թեմի նորանշանակ  
առաջնորդական տեղապահը կներկայացվի  
համայնքին

Թուրք Գրող Քեմալ Եալչըն Ներողութիւն Կը  
Ինդրէ Հայերէն

Խարկովի Հայ համայնքի հաջողությունները  
Փարիզում

ԱՄՆ հայոց եկեղեցիների առաջնորդներն  
ուղերձ են հղել Սբ Հարության և Հայոց  
ցեղասպանության օրերի կապակցությամբ

Հայազգի Գլեդիս Բերեջիկյանը նշանակվել  
է ավստրալական նահանգի տրանսպորտի  
նախարար

Երաժշտական դպրոցի բացում Վրաստանի  
Ախալքալաքի շրջանի Տուրցխ գյուղում ՀՀ  
Սփյուռքի նախարարության օգնությամբ

Ռումինահայությունն այսուհետ առավել  
համակարգված կգործի ի շահ Հայաստանի  
և Արցախի

Ապրիլի 24-ի նախաշեմին Թուրքիայի  
իշխանությունները զգուշանում են  
հայկական Սփյուռքի գործողություններից

Թուրքիայում Անատոլիայի հայերի դեմ  
պայքարի գաղտնի հետախուզություն էր  
ստեղծվել

Կալկաթայում նշվեց Հայոց  
մարդասիրական ճեմարանի հիմնադրման  
190-ամյակը

## Հասարակություն

Ամենայն Հայոց կաթողիկոսն իր  
գնահատանքն է հայտնել Հայ կանանց  
միջազգային միության անդամներին

## Մշակույթ

Երեւանում կբացվի Գլենդեյլի «Աթանյան»  
արվեստի կենտրոնի ցուցահանդեսը

Ավիկ Մարության. Արևմտյան Հայաստանի  
բարբառները ոչնչացման եզրին է

Էմմիի եվրատեսիլյան փրոմո-արշավը  
հազեցած է, նա կայցելի Կիև, Քիշնև,  
Նիդեռլանդներ, Աթենք և Վարշավա

## Հայտարարություններ

ՀՀ սփյուռքի նախարարության «Հայ կնոջ  
դերը Սփյուռքում» կլոր սեղան

# Քաղաքականություն



Վրաստանի հայերը  
կրկին կոչ են անում  
երկրի

## Իշխանություններին ճանաչել Հայոց ցեղասպանությունը

2011-04-09

«Մենք, Վրաստանի Հայ Համայնք կազմակերպությունից ներքոստորագրյալներս, հանուն արդարադատության և ժողովրդավարական արժեքների կոչ ենք անում ձեզ միանալ միջազգային քաղաքակիրթ հանրության նախաձեռնությանը և Վրաստանի խորհրդարանում նախաձեռնել Օսմանյան Կայսրության տարածքում Հայոց Ցեղասպանության հարցի քննարկումը», - ասված է ուղերձում:

Իսկ Վրաստանի խորհրդարանի հայազգի պատգամավորներին Վրաստանի հայկական կազմակերպությունները կոչ են անում մինչև ապրիլի 24-ը խորհրդարանի նիստի ժամանակ հանդես գալ հայտարարությամբ և խորհրդարանին կոչ անել՝ հարգել 1915-1923

թվականների Հայոց ճեղասպանությամբ անմեղ գոհերի հիշատակը:

Ուղերձի նախաձեռնողը «Վրաստանի Հայ համայնք» հասարակական կազմակերպությունն է: ՎՀՀ-ի նախաձեռնությանը միացել են նաև հետևյալ հասարակական կազմակերպությունները. «Վրաստանի Հայկական համագործակցության կենտրոնը», «Վրաստանի Հայ ուսանողների միությունը», «Վրաստանի Հայ պատանիների միությունը», «Վրաստանի հայկական երիտասարդական միությունը», «Վիրահայերի Միավորում «Նոր Սերունդ»» և «Թբիլիսյան Հայերի Վեհաժողով»:

Ապրիլի 24-ին լրանում է 20-րդ դարի առաջին ճեղասպանության՝ 1915-1923 թվականներին Օսմանյան Թուրքիայում Հայոց ճեղասպանության իրականացման 96 տարին: Ճեղասպանության հետևանքով իրենց իսկ պատմական հայրենիքում ոչնչացվեց ավելի քան 2 միլիոն մարդ: Ճեղասպանությունը որակվում է որպես մարդկության դեմ հանցագործություն, իսկ մարդկության դեմ հանցագործությունը վաղեմության ժամկետ չունի:

Մինչ օրս Հայոց ցեղասպանությունը ճանաչել է ավելի քան 20 երկիր, ինչպես նաև միջազգային կազմակերպություն, այդ թվում՝

Եվրախորհրդարանը և Եվրախորհուրդը:

Բազմաթիվ երկրներում ընթանում է Հայոց Ցեղասպանության քննարկման և ընդունման գործընթաց (օրինակ՝ ԱՄՆ, Իսրայել, Իսպանիա, Բուլղարիա, Սերբիա և այլն), ասվում է «Վրաստանի Հայ Համայնք»-ի մամուլի ծառայության հաղորդագրության մեջ:



## Ապրիլի 13-ին ԱՄՆ Կոնգրեսում կհարգեն Հայոց ցեղասպանության

### գոհերի հիշատակը

2011-04-08

ԱՀՀ Խորհրդի անդամ Էննի Տոտան և ԱՀՀ գործադիր տնօրեն Բրայան Արդունին քննարկել են ԱՄՆ հայ համայնքի համար հետաքրքրություն ներկայացնող հարցերն ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի փոքրամասնության առաջնորդ Սթենի Հոյերի, դեմոկրատական կուսակցությունից կոնգրեսական Շելլի Բերքլիի և Մերիլենդից ընտրված կոնգրեսական Ջոն Սարբանեսի հետ:

Կոնգրեսականների հետ հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին ամերիկյան օգնության տրամադրման հետ կապված հարցեր:

Ինչպես հայտարարել է Էննի Տոտան, ապրիլի 13-ին ԱՄՆ Կոնգրեսում Հայաստանի աջակցման խմբի հովանու ներքո տեղի կունենա Հայոց ցեղասպանության 96-ամյակին նվիրված ոգեկոչման միջոցառում:



## 20-րդ դարի ցեղասպանությունների մասին գրքի հեղինակը

### կարող է պետքարտուղար դառնալ Հիլարի Բլինթոնից հետո

2011-04-04

The New York Times-ի կարծիքով, Սամանտա Փաուերը Հիլարի Բլինթոնի հետ Լիբիայի նկատմամբ քաղաքականության գլխավոր ճարտարապետն է և նրա ազդեցությունը Սպիտակ տանն օրըստօրե աճում է: Եթե Բլինթոնը հրաժարական տա, ապա Փաուերը ԱՄՆ արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի պաշտոնի առաջին թեկնածուներից

կլինի: Բայց դա այն դեպքում, եթե Օբաման հաղթի ընտրություններում:

Փաուերը սկսել է իր լրագրողական գործունեությունը Բոսնիայում, երբ 22 տարեկան էր և եղել է երկրագնդի համարյա բոլոր թեժ կետերում: Նա 2002-ի Պուլիտցերյան մրցանակի հաղթող է «Խնդիր դժոխքից» գեղասպանությունների մասին գրքի համար, որում պատմվում է նաև գեղասպանության հանդեպ ԱՄՆ արտաքին քաղաքականության դիրքորոշման մասին:

«Հայաստանում, նացիստական Գերմանիայում, Կամբոջայում և Ռուանդայում գեղասպանությունները տեղի են ունեցել այն պատճառով, որ պետական իշխանությունները դրա վրա աչք են փակել, իսկ առանձին մարդիկ ընտրել են չմիջամտելու քաղաքականությունը: Ամենատարածված պատասխանն է՝ «մենք չգիտենք»: Դա սուտ է», - կարծում է Սամանտա Փաուերը:

---

## ՀՀ սփյուռքի նախարարություն



## ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացավ «Հայ կնոջ դերը Սփյուռքում» խորագրով

### կլոր սեղան

2011-04-08

Կլոր սեղանի նպատակն էր բնութագրել և արժևորել հայ կնոջ յուրահատուկ տեղն ու դերը հայ կյանքում, անդրադառնալ Սփյուռքում նրա կատարած ազգապահպան դերին, հայ կնոջ դերին ընդհանրապես՝ որպես ընտանիքի սրբության, պատվի ու արժանապատվության պահպանողի և նոր սերնդի առաջին դաստիարակի պարտականությունները կատարողի:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Շնորհավորելով հայ կնոջը մայրության և գեղեցկության տոնի առթիվ՝ տիկին Հ.Հակոբյանը մաղթեց առողջություն և երջանկություն՝ ընդգծելով կնոջ անգնահատելի դերակատարությունը հայ հասարակությունում:

Այնուհետև ՀՀ ԳԱԱ հնագիտության և

ազգագրության ինստիտուտի աշխատակիցներ Ա.Ստեփանյանն ու Ս.Պողոսյանը զեկուցեցին համապատասխանաբար «Հայրենադարձությունը և հայ կինը» և «Հայ կինը ավանդական և արդի հասարակության մեջ` Հայաստանում և Սփյուռքում» թեմաներով:

Կլոր սեղանի ընթացքում անդրադարձ կատարվեց հայ կնոջ դերին ազգային ինքնության ձևավորման ու պահպանության գործընթացում, հասարակական- քաղաքական, մշակութային կյանքում, գիտության և կրթության բնագավառում:



## «Հայերի հետքերը Բրազիլիայում»

2011-04-06

Այս տարի ՀՀ սփյուռքի

նախարարությունը նախատեսում է իրականացնել «Հայերի հետքերը Բրազիլիայում» խորագրով միջոցառումների շարք, որի շրջանակներում կիրատարակվի գիրք, տեղի կունենան մի շարք համերգներ ու ցուցահանդեսներ, տեղեկացնում է նախարարության Ամերիկայի հայ համայնքների վարչությունը:

Բրազիլիայում ապրող հայերի պատմությունը

ներկայացնող ցուցահանդեսն ամենայն հավանականությամբ կբացվի այս տարվա սեպտեմբերի յոթին՝ Բրազիլիայի անկախության օրը եւ կտեւի մինչեւ Հայաստանի անկախության տոնը՝ սեպտեմբերի քսանմեկը: Միջոցառումներին կմասնակցեն նաեւ բրազիլահայ հայտնի դերասանուհի Արաքսի Բալաբանյանը եւ լուսանկարիչ Մանուկ Փոլադյանը:

ՀՀ սփյուռքի նախարարության եւ Հայաստանում Բրազիլիայի դեսպանության համագործակցության արդյունքում լույս կտեսնի պրոֆեսոր Հակոբ Քեշիշյանի հեղինակած «Հայերի հետքերը Բրազիլիայում» գիրքը երեք լեզուներով՝ հայերեն, անգլերեն եւ պորտուգալերեն: Գրքի տպագրության ծախսերը կհոգա ՀՀ սփյուռքի նախարարությունը:

«Հայերի հետքերը Բրազիլիայում» ծրագրի շրջանակներում տեղի կունենան նաեւ մի շարք դասական համերգներ՝ բրազիլահայ անվանի երաժիշտների եւ Հայաստանի նվագախմբերի մասնակցությամբ: Հայկական համերգասրահներում մասնավորապես կհյուրընկալվեն բրազիլական երաժշտասեր

հանրությանը քաջ հայտնի, ծագումով հայ երաժիշտներ ժոան Կույումջյանը, Սուլանժ Մերդինյանը, Գոհար Վարդանյանը եւ այլք:



## Կայացավ ՀՀ սփյուռքի նախարարին կից ատյանի հերթական նիստը

2011-04-05

Օրակարգում ընդգրկված էր երեք հարց՝ ՀՀ սփյուռքի նախարարության, Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության մասնակցությամբ կազմակերպվող 2011թ. համահայկական մրցանակաբաշխության մասին, «Հարավային (Լատինական) Ամերիկայի կրթամշակութային հիմնախնդիրների լուծմանն աջակցության» ծրագրի շրջանակներում 2011թ. կատարվելիք աշխատանքների մասին, ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների վարչության հաշվետվությունը և ընթացիկ հարցեր:

ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի համահայկական ծրագրերի վարչության պետ Ա.Մխիթարյանը մանրամասներ ներկայացրեց ՀՀ

սփյուռքի նախարարության և Համաշխարհային հայկական կոնգրեսի ու Ռուսաստանի հայերի միության կողմից կազմակերպվող «Հայապահպանության գործում ունեցած նշանակալի ավանդի համար» համահայկական ամենամյա մրցանակաբաշխության շրջանակներում 2011թ. անցկացվելիք մրցույթի երեք անվանակարգերի վերաբերյալ՝ «Մայրենիի լավագույն ուսուցիչ», «Լավագույն երիտասարդական կազմակերպություն» և «Կտոր մը Հայրենիք»: Յուրաքանչյուր անվանակարգում սահմանված են գլխավոր, առաջին, երկրորդ, երրորդ կարգի և խրախուսական մրցանակներ:

«Հարավային (Լատինական) Ամերիկայի կրթամշակութային հիմնախնդիրների լուծմանն աջակցության» ծրագրի շրջանակներում 2011թ. կատարվելիք աշխատանքների մասին գեկուցեց ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի Ամերիկայի հայ համայնքների հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար Գ.Դաբադյանը: Ըստ այդ ծրագրի 2011թ. նախատեսվում է Հարավային Ամերիկայի հայկական կրթօջախներին ուղարկել կրթական և ուսումնաօժանդակ նյութեր, կազմակերպել

Անանիա Շիրակացի ճեմարանի և Արգենտինայի Միսիթար Սեբաստացի վարժարանի սաների շախմատի մրցույթ: Ծրագրի շրջանակներում 2011թ. նախատեսվում է Հայաստանում` Երևանում և Գյումրիում, կազմակերպել Ուրուգվայի «Կոունկ» երգչախմբի համերգը, աջակցել Սան Պաուլոյի համալսարանի հայագիտական ամբիոնի աշխատանքներին, կազմակերպել «Հայերի հետքերը Բրազիլիայում» խորագրով միջոցառումներ, այդ թվում` գրքի հրատարակություն, ցուցահանդես, համերգ, կլոր սեղան քննարկում և այլն:

ՀՀ սփյուռքի նախարարության Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների վարչության կողմից 2010թ. կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացրեց վարչության պետ Ա.Դումանյանը: Նա անդրադարձավ Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների անձնագրերի ստեղծման և համալրման, տարածաշրջանում գործող հանրակրթական հաստատություններին ուսումնական գրականությամբ ապահովելու, Հայաստանում քնակվող իրաքահայերի

ինտեգրման և այլ ծրագրերի ուղղությամբ  
կատարված աշխատանքներին:



## ՀՀ սփյուռքի նախարարություն այցելեցին սփյուռքահայ ուսանողներ

2011-04-05

Համահայկական ծրագրերի վարչության կողմից  
ուսանողներին

ներկայացվեց նախարարության գործունեություն  
ն ու նպատակները, նախարարության կողմից  
իրականացվող ծրագրերը՝ մասնավորելով  
հատկապես «Ուսանողական գարուն» և «Արի  
տուն» ծրագրերը:

Գիտակրթական ծրագրերի բաժնի պետ Ս.

Համբարյանը լսեց ուսանողների սպասելիքներն ու  
ակնկալիքները նախարարությունից և կոչ արեց  
նրանց լինել ավելի ակտիվ, մասնակցել  
նախարարության ծրագրերին, իրենց վստահ  
զգալ սեփական Հայրենիքում՝ ավելացնելով, որ  
սփյուռքի նախարարությունը միշտ պատրաստ է լսել  
և աջակցել նրանց:

Հյուրընկալվող ուսանողներն իրենց թեկնածուին առաջադրեցին «Սփյուռքահայ ուսանողների խորհրդում»:



## **Շնորհանդես ՀՀ սփյուռքի նախարարությունում**

2011-04-05

Միջոցառմանը բացման խոսքով հանդես եկավ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Ներկա էին Հայաստանի գրողների միության նախագահ Լ.Անանյանը, «Արմինիան Թայմս» ամսաթերթի գլխավոր խմբագիր Արթուր Խանումյանը, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Ն.Մարտիրոսյանը, բուպեներ առաջ ավարտված ՀՀ սփյուռքի նախարարին կից ատյանի նիստին մասնակից անդամները, հասարակական և ստեղծագործական կազմակերպությունների ղեկավարներ և այլք:

Կարևորելով Հայաստանում ամսաթերթի հրատարակումը` ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը նշեց նախարարության հիմնադրման օրվանից Սփյուռքում գործող հայկական զանգվածային լրատվամիջոցների հետ ակտիվ համագործակցության մասին: Տիկին Հ.Հակոբյանը խոստացավ բոլոր հնարավոր միջոցներով

աջակցել «Արմինիան Թայմս» ամսաթերթին՝  
ընդգծելով, որ նախարարության հետ սերտ  
համագործակցության արդյունքում ամսաթերթը  
լուսարանում է Հայաստանի  
Հանրապետությունում և Սփյուռքի հայկական  
համայնքներում տեղի ունեցող  
իրադարձությունները, ինչպես նաև  
անդրադառնում է Հայաստան-Սփյուռք  
գործակցությանն ուղղված ծրագրերին և ՀՀ  
սփյուռքի նախարարության գործունեությանը:

Ամսաթերթի գլխավոր խմբագիր Ա.Խանումյանը,  
կարևորելով ՀՀ սփյուռքի նախարարության հետ  
համագործակցությունը, ընդգծեց ՀՀ Նախագահի  
կողմից ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծման  
անհրաժեշտությունը և Սփյուռքի կողմից այդ  
քայլի սպասված լինելը: Նա նշեց  
նախարարության միջոցով Հայրենիք-Սփյուռք  
կապերի և գործակցության ակտիվացման  
փաստը՝ անհրաժեշտություն համարելով  
ամրապնդել և հզորացնել Հայրենիք-Սփյուռք  
կամուրջը:

Ա.Խանումյանի խոսքով հայերեն և ռուսերեն լույս  
տեսնող ամսաթերթը կհրապարակվի նաև

անգլերեն, իսկ ապրիլի վերջին ամսաթերթը կունենա նաև էլեկտրոնային տարբերակ: Ա.Խանումյանը հավելեց, որ Մոսկվայում ամսաթերթը լույս է տեսնում հիսուն հազար տպաքանակով, իսկ Հայաստանում` դեռևս հազար, սակայն շուտով տպաքանակը կավելանա:

Շնորհանդեսին ներկա էին նաև ՀՀ սփյուռքի նախարարին կից ատյանի անդամները, որոնք մասնակցել էին նույն օրը տեղի ունեղած ատյանի նիստին:



**«Ցավի, հիշողության եւ պայքարի կոթողներ»**

2011-04-04

Այն աշխարհում Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակի առիթով կառուցված հուշարձանների համահավաք վավերագիր մատյան է, ուր

յուրաքանչյուր կոթող փաստում է Օսմանյան Թուրքիայի կողմից մարդկության ու քաղաքակրթության դեմ ոճրագործության դատապարտումը: «Նախաձեռնելով պատկերագրքի ստեղծումը` ՀՀ սփյուռքի նախարարությունը նպատակ է ունեցել մեկ գրքի

մեջ ամփոփել Հայաստանի Հանրապետությունում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում և արտերկրում գտնվող հուշակոթողները՝ որպես չխամբող հիշողություն ցավի և ողբերգության, պետությունների կողմից Հայոց Ցեղասպանության դատապարտման և նոր ցեղասպանությունների կանխարգելման անհրաժեշտություն»,- իր խոսքում գրում է ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը:

XIX դարի վերջը և XX դարի սկիզբը հայ ժողովրդի համար ճակատագրական ժամանակաշրջան էր: Օսմանյան կայսրությունը ծրագրեց և իրագործեց հայոց Մեծ Եղեռնը: Տեղահանվեցին, արքայրվեցին, կրոնափոխ արվեցին ու սրի գոհեր դարձան հարյուր-հազարավոր հայեր: Այս իրողությունը ժամանակին դատապարտեցին օտարազգի առաջադեմ հասարակական-քաղաքական գործիչներ ու մտավորականներ Հենրի Մորգենթաուն, Արմին Վագները, Աննա Հեդիգ Բյուրը, Ֆրանց Վերֆելը, Յոհաննես Լեփսիուսը, Անատոլ Ֆրանսը, Բենեդիկտոս XV-ը, Ֆրիտյոֆ Նանսենը և այլք:

Աշխարհի տարբեր ծագերում /Արգենտինա,

Բրազիլիա, ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Իրան,  
Սիրիա, Լիբանան, Հնդկաստան, Եգիպտոս,  
Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Գերմանիա,  
Ֆրանսիա, ՌԴ, ՀՀ և այլուր/ ապրող հայի  
հիշողությունը, որ նաև ճակատագիր է, ստիպում է  
ունենալ հայ մնալու գիտակցությունը:  
Ժողովածուն բացվում է Երևանի  
Ծիծեռնակաբերդի բարձունքում կառուցված  
հուշահամալիրի ազդու պատկերով:

Պատկերագրքում զետեղված յուրաքանչյուր  
խաչքարի, յուրաքանչյուր հուշարձանի  
մեջ ծածկագրված լռություն կա, որ ներըմբռնելի է  
եղելության ժամանակի ռեզոնանսում, քանզի  
յուրաքանչյուր հայի հոգում ողջ հայություն է  
ապրում, Սկզբի ու Վերջի միջև՝ շարունակական,  
որ Ընթացքն է՝ հարատև, առանց դադար, ինչպես  
Դանիել Վարուժանն է ասում՝ «...արյունից պիտի  
ծնվին կակաչներ, պիտի կանգնին գերեզմանին  
մեջ իրենց...»:

Ճակատագրի ու պատմության ներքին դրաման  
ամբողջանում է գիրքը թերթելիս, աշխարհի  
ընկալումը երևում է միջնորդված  
բանականությամբ չտրվող կոթողների

չհաղթահարվող պատկերներով, որոնք նույն  
աշխարհը դարձնում են տեսիլք,  
վերակենդանացնում նզովյալ ճանապարհների,  
աղետի ու աքսորի անվերջ զարհուրանքը, որ  
մահվան հիշողության հաճախանքն ունի:

Աշխարհը եղել է ու կա, ու աշխարհը մեծ է, ու  
անհայտի հակադրված որոնումը պարփակում է  
անիծյալ ժամանակի ու մի ողջ  
սերնդի գոյաբանական ողբերգությունը:

«Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ»  
պատկերագիրքը ևս մի հուշարձան է, որ իրական  
է, և թվում է `անիրական, ինչ-որ մի ժամանակ  
տեսնված տեսիլք, հուշ-ապրում, զարթուն  
ողբերգություն: Ու ջղերի լարումից կծկված բոցի  
մի տեսակը ` սպիտակ լույսը, անընդհատ  
հիշեցնում է անապատի շիկացող տեսարանները,  
որոնցից վեր դատարկ երկինքը բերնեբերան  
լցվում է հողի լռությամբ, համաշխարհի  
աշխարհագրությունը նույնանում է հայի հոգու  
աշխարհագրությանը: Ծածկագրված այս  
լռությամբ էլ վերձանվում են մարդ-գազանի  
հնարավոր բոլոր կարողությունները, որոնցից  
փրկվածները հետո դարձել են օտար ավերում

դեգերող միայնակ աստղեր ու ձևավորել  
հայկական ՄՓՅՈՒՌՔԸ:

## Միյունք



### Կինում ցուցադրվեց Ադրբեջանում Հայոց ցեղասպանության մասին վավերագրական ֆիլմ

2011-04-10

Ուկրաինացի հանդիսատեսին ցուցադրվեցին փաստագրական վկայություններ, որոնք պատմում են հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի մասին: Ցուցադրությունից առաջ Analitika ՏՎԿ փորձագետ Երվանդ Երվանդյանը պատմեց Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության պատմությունը, ինչպես նաև Բաքվում, Սումգայիթում և Մարաղայի հայերի ջարդերի մասին: Կայացավ քննարկում «Հայոց ցեղասպանություն՝ անպատժելիությունը կրկնության է հանգեցնում» թեմայի շուրջ: Քննարկման մասնակիցներն ուշադրություն դարձրեցին այն փաստին, որ Ադրբեջանում հայերի ջարդերը XX դարասկզբի Հայոց ցեղասպանության շարունակությունն են: Եթե ժամանակին արդար գնահատական տրվեր Հայոց

ցեղասպանությանն Օսմանյան կայսրությունում,  
չէին լինի հետագայում տեղ գտած  
ցեղասպանությունները:

Միջոցառման ժամանակ ներկայացվեց նաև  
<http://maragha.org> ինտերնետ-նախագիծը, որը  
բացահայտում է Մարաղայում խաղաղ հայ  
բնակիչների հետ սարսափելի հաշվեհարդարի  
իրական փաստերը:



**Թուրք նախարարը**  
**վիրավորել է**  
**սփյուռքահայերին**

2011-04-08

Թուրքական Aksam-ի փոխանցմամբ՝ Էզեմեն  
Բադրընը նշել է, թե Հայոց ցեղասպանության  
ժխտումը քրեականացնող օրինագիծը հակասում է  
խոսքի ազատությանը:

Թուրք նախարարը հայտարարել է, թե նման  
նախագծերն ի հայտ բերող հայկական սփյուռքի  
ներկայացուցիչները «ատելության  
վաճառականներ» են:

Նշենք, որ Ֆրանսիայի սոցիալիստական  
կուսակցությանը մոտ կանգնած հայկական

աղբյուրների տվյալներով, այդ կուսակցությունը որոշել է մայիսի 4-ին օգտագործել խորհրդարանի ամբիոնը (այդ օրը խորհրդարանականներն իրավունք ունեն օրինագծեր ներկայացնել), որպեսզի քննարկման ներկայացնեն Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար քրեական պատիժ սահմանելու մասին 2006-ի հոկտեմբերի 12-ին ընդունված օրինագիծը վավերացնելու հարցը:

NEWS.am



**«Ակոս» թերթը՝  
Թուրքիայի  
խորհրդարանում**

2011-04-08

Ինչպես գրել է թուրքական «Միլիյեթը», այս որոշումն ընդունվել է քրդամետ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության պատգամավոր Ուֆուք Ուրասի առաջարկով: Որոշումը կայացվել է այն ժամանակ, երբ թերթ պատրաստվում էր տոնել իր 15-ամյակը:

Հիշեցնենք, որ «Ակոսը» հիմնադրվել է 1996թ հայազգի Հրնատ Դինքի կողմից, ով սպանվել է 2007-ին՝ թուրք ծայրահեղականի կողմից:

NEWS.am

---

## Տրանսիայի հայերն ու թուրքերը միասին կհավաքվեն Փարիզի Կոմիտասի արձանի մոտ

2011-04-08

«Մենք միասին ենք» նախաձեռնության  
անդամները կհավաքվեն Կոմիտասի արձանի  
մոտ:

Միջոցառումը կոչված է ցուցադրելու  
«պատմական ճշմարտության ու մարդկային բաց  
հարաբերությունների վրա խարսիսված ապագայի»  
կենսունակությունը:

Հայերը չեն փակի դուռը բարի կամքի տեր  
թուրքերի առջև, ինչպես նաև թուրքերը աչք չեն  
փակի հայերի ցավի վրա», -ասվում է «Մենք  
միասին ենք» հայտարարության մեջ:

---

## Շվեյցարիայի հայոց թեմի նորանշանակ առաջնորդական տեղապահը կներկայացվի համայնքին

2011-04-08

Ապրիլի 9-ին Հայր Մեսրոպը ԱՄՆ Հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Ս. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի հետ կժամանի Ժնև, հայտնում է Սբ Էջմիածնի մամլո դիվանը:

Գերագույն հոգևոր խորհրդի հանձնարարությամբ ապրիլի 10-ին, Ժնևի Ս. Հակոբ առաջնորդանիստ եկեղեցում, Շվեյցարիայի հայոց թեմի նորանշանակ առաջնորդական տեղապահը Հովնան Սրբազանի կողմից կներկայացվի հայ համայնքին:



**Թուրք Գրող Քեմալ Եալչըն Ներողութիւն Կը Խնդրէ Հայերէն**

2011-04-07

Մէկ օր առաջ, նոյն գիրքի ներկայացումը կազմակերպուած էր Սալոնիքի «Տէր Զաքարեան»

սրահէն ներս:

Հայ եւ յոյն ներկաներով լեցուն սրահին մէջ տեղի ունեցաւ գիրքին յունարէն հրատարակութեան ներկայացումը՝ ՀՅԴ Յունաստանի կեդրոնական կոմիտէի, Հայ Դատի յանձնախումբի, ՀԿ Խաչի, Համազգայինի եւ ՀՄԸՄի շրջանային վարչութեանց ներկայացուցիչներու, հայկական

վարժարաններու տնօրէնութեանց, ուսուցիչներու ու մամլոյ ներկայացուցիչներու մասնակցութեամբ:

Գերմանիա բնակող թուրք գրող Քեմալ Եալչըն, թուրք հեղինակներու առաջիններէն է, որ անդրադարձած է հայկական նիւթերու, մասնաւորապէս՝ իսլամացած ու քողածածկ հայերու, տեղահանութիւններու, Թուրքիոյ կողմէ Բ. Համաշխարհային պատերազմին ընթացքին հայերու եւ ոչ-մահմետական մնացեալ քաղաքացիներուն հանդէպ կիրարկուած քաղաքականութեան, երբ հարկերու վճարման հսկայ գումարներ պարտադրուեցան՝ ոչնչացնելով մեծ ջանքերով ապահովուած հարստութիւններ, եւ այլն:

Քեմալ Եալչընի այս գիրքը Թուրքիոյ մէջ բիրտ «ընդունելութեան» արժանացաւ, երբ կրակի տրուեցաւ ուրիշ գիրքերու հետ: Այս իրողութիւնը սակայն բնաւ արգելք չեղաւ, որ գիրքը թարգմանուի ու տարածուի այլ երկիրներու մէջ: «Սիրելի քոյրեր, սիրելի եղբայրներ եւ ընկերներ. սիրով եւ յարգանքով կը դիմեմ ձեզ» խօսքերը հայերէն, յունարէն եւ թրքերէն լեզուներով արտասանելով՝ թուրք գրագետը սկսաւ իր խօսքը: Ապա ան, ի միջի այլոց, հետեւեալ խօսքերը

արտասանեց. «Շատեր են անոնք, որոնք երկու տեսակ հարցում կ' ուղղեն ինձի. առաջին՝ դուն հայկական ծագո՞ւմ ունիս, անոր համար ալ հայերու վերաբերող գիրքեր կը գրես: Երկրորդ՝ չե՞ս վախնար:

«Այսպիսի հարցումներու ես միշտ նոյն պատասխանը կու տամ եւ այժմ ձեզի ալ կ' ըսեմ. ես թուրք ծնողներու, սիւննի մահմետական ընտանիքի զաւակ եմ: Որքան ես գիտեմ, իմ գերդաստանիս մէջ ոչ հայու, ոչ ալ քրիստոնէայի հետք կայ: Բայց կրնամ ըսել, որ հայերուն պատահած Մեծ աղէտին մասին, Անատոլուի յոյներու ապրած աղէտին մասին գրելու, ազգերու ցաւը ուսումնասիրելու եւ պատմական ճշմարտութիւնները ի յայտ բերելու համար, բաւական է խիղճ ունենալ: Ես, նախ եւ առաջ, որպէս մարդ կ' ուսումնասիրեմ այս թեմաները, ու գիրքեր կը գրեմ, որպէսզի ուրիշներ ալ իմանան: Իմ նախնական, միջնակարգ եւ բարձրագոյն կրթութիւնս Թուրքիոյ մէջ ստացած եմ: Թրքական ազգային կրթութեան սկզբունքներուն համաձայն գրուած պատմութեան դասագիրքեր կարդացած եմ: Ոչ միայն ոչ-մահմետական ժողովուրդներու գոյութեան, այլեւ ալեւիներու, դըրլպաշներու,

քիւրտերու գոյութեան մասին նոյնիսկ ոչինչ գիտէինք»:

Քեմալ Եալչըն, շարունակելով իր խօսքը՝ իր գիրքի ծննդոցին մասին ըսաւ. «Ինձի հարց կու տան, թէ ինչպէ՞ս հասայ այս գիրքը գրելու: Դպրոցական կեանքէն, դասերէն դուրս իմ կարդացած գիրքերուն շնորհիւ սկսայ իմանալու ճշմարտութիւններ: Երբ 1980ին Գերմանիա գտնուեցայ, սկսայ ձերբագատուելու միակողմանի, անճիշդ գաղափարներէ: Եւ այս հարցին մէջ իմ վրայ ամենամեծ ազդեցութիւն ունեցած մարդը Մելինէ անունով թրքերէն լեզուի ուսուցչուհի ընկերուհիս էր: Երբ սկսայ ուսումնասիրելու Մելինէին կեանքը, հասկցայ, որ իր ապրած ցաւը իրականութեան մէջ հայերու ապրած ցաւերուն միայն մէկ մասն էր:

«Երկար ճամբորդութիւնս սկսայ Ամասիայէն, ուր հանդիպեցայ հայուհիներու, որոնք քիւրտերու եւ թուրքերու հետ ամուսնացած էին. քողարկուած հայ, քողարկուած քրիստոնէայ էին անոնք»:

Ապա, թուրք գրողը իր իսկ հարցումին պատասխանելով՝ յայտնեց. «Իսկ վախի՞

զգացումիս մասին... Մարդ եմ եւ վախ կը զգամ. բայց այս տարիքիս, կը մերժեմ լռել, չխօսիլ կամ չլսել: Գիտեմ, որ պետք է գրել այս բոլոր հարցումներուն մասին. եթէ ոչ՝ մեր զաւակները ինչպէ՞ս պիտի իմանան այս ճշմարտութիւններուն մասին: Երկիրս կը սիրեմ, ազգս կը սիրեմ: Այս պատճառով է, որ պետք է իրականութեան մասին գրեմ»:

«Որպէս թուրք գրագետ ներողութիւն կը խնդրեմ ձեզմէ. անէ՛ծք անոնց, որոնք ծրագրեցին եւ իրագործեցին այս մեծ աղէտը» ըսաւ Քեմալ Եալչըն: Ան համոզում յայտնեց, թէ Թուրքիոյ ուրացման քաղաքականութիւնը երկար կարելի չէ շարունակել: Եզրակացնելով ան յայտնեց ըսելով. «Նոյնիսկ եթէ մենք չտեսնենք այդ օրը, վստահ եմ, որ մեր զաւակները պիտի տեսնեն»:

Մօտ մէկ ժամ տեւած իր դասախօսութեան աւարտին, Քեմալ Եալչըն մակագրեց իր գիրքերը:



**Խարկովի Հայ համայնքի**  
**հաջողությունները**  
**Փարիզում**

2011-04-07

Փառատոնին մասնակցում էր նաև Ուկրաինայի Խարկով քաղաքի Հենրիխ Ալթունյանի անվան հայկական կրթամշակութային կենտրոնի «Արաքս» երգի-պարի համույթը, որը և զբաղեցրել է 2-րդ պատվավոր տեղը: Պատանի վոկալիստների մրցույթում առաջին տեղը գրավել է Դիաննա Առաքելյանը և ստացել փառատոնի եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք-հավաստագիր: Ինչպես տեղեկացնում են փառատոնի կազմակերպիչները, եզրափակիչ փուլը տեղի կունենա Սանկտ Պետերբուրգ քաղաքում:

Փառատոնի ծրագիրը ներառում էր մրցույթներ նաև այլ անվանակարգերում, որոնց ժամանակ նույնպես աչքի ընկան խարկովցի մեր հայրենակիցները: Այսպես, օրինակ, «լավագույն զգեստ» անվանակարգում մրցանակը նույնպես շնորհվեց Դիաննա Առաքելյանին, Կերպարվեստի գծով մրցանակներ ստացան Նարինե Հովհաննիսյանը (1-ին տեղ), Մանե Հովհաննիսյանը (1-ին տեղ), Յանա Գրոմովան (2-րդ տեղ), Գեղանկաչության գծով՝ Աստեր Մանուկյանը – 1-ին տեղ, Ալթունյան-Ստեփանյանը – 1-ին տեղ, Գագիկ Հարությունյանը –

2-րդ տեղ:

Նախագծի հովանավորներն էին Սանկտ Պետերբուրգում Comedy Club Production մասնաձյուղը, Riv Cauche Musigue ասոցիացիան Ֆրանսիա, ք. Փարիզ, «Ամառային ձյուն» թատրոնն մշակութային-լուսավորական ասոցիացիան Ֆրանսիա, ք. Փարիզ, Կրթության Զակոպանյան կենտրոնը Լեհաստան, ք. Զակոպանյե, «Շնորհալի երիտասարդների միությունը» Ուկրաինա, ք. Կիև, Անհատական բարեգործական հիմնադրամը ԵՄՄ Ռուսաստան, ք. Սանկտ Պետերբուրգ, «Պետրոսկանդ» կազմակերպությունը Շվեդիա, ք. Ստոկհոլմ, «Victoria Travel» կազմակերպությունը Լեհաստան, ք. Վարշավա, «Ղրիմի ծովեզր» ՍՊԸ-ն Ուկրաինա, Ղրիմ, «Petro Star» կազմակերպությունը Էստոնիա, ք. Թալլին:

Ասատուր Խնկոյան և Գայանե Համբարձումյան

**ԱՄՆ հայոց եկեղեցիների**  
**առաջնորդներն ուղերձ են հղել Սք**  
**Հարության և Հայոց ցեղասպանության**  
**օրերի կապակցությամբ**

2011-04-06

«Որպես քրիստոնյաներ մենք ապրիլի 24-ին կնշենք Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունը և որպես հայեր կոգեկոչենք մեր ժողովրդի վերածնունդն ու վերականգնումը մոխիրներից ու անգութ Ցեղասպանությունից: Պիտի նշենք մեր հարությունը որպես ժողովրդի, որ ենթակա դարձավ հալածանքների ու բռնադատության, որնք մեկ դար առաջ կսպառնային ի սպառ բնաջնջել մեզ: Մեր ազգային հարությամբ, մենք՝ զավակները հինավուրց ազգի, վառ կպահենք և կհարգենք նահատակների տեսլականն ու ոգին, անկորնչելի ավանդը:

Որպես քրիստոնեությունը պետական կրոն առաջինն ընդունած երկրի զավակներ, կոչ ենք անում մեր քրիստոնյա բոլոր եղբայրներին ու քույրերին և բոլոր կրոնների հավատացյալներին, որպեսզի Սբ Հարության տոնի օրը մեզ հետ աղոթեն ի հիշատակ Օսմանյան կայսրությունում ցեղասպանության զոհ դարձած ավելի քան 2,5 մլն հայերի, ասորիների, պոնտացի հույների, հոների: Աղոթենք նաև, որ արդարությունն ու խաղաղությունը տիրական դառնան մեր աշխարհում», -ասվում է ուղերձում, հաղորդում է

Ամերիկայի Արևմտյան ափի Հայ Դատի  
հանձնախումբը:



**Հայազգի Գլեդիս  
Բերեջիկյանը  
նշանակվել է  
ավստրալական նահանգի  
տրանսպորտի նախարար**

2011-04-06

Նահանգի լիբերալ-դեմոկրատական կոալիցիայի  
ներկայացուցիչ Բարրի Օ'Ֆարրելի խոսքով,  
Գլեդիս Բերեջիկյանն իր թիմի առանցքային  
անդամն է, գրում է [armenia.com.au](http://armenia.com.au)-ն:

Ավստրալիայի Հայ Դատի հանձնախմբի (ANC  
Australia) գործադիր տնօրեն Վարանտ  
Մեգերդիչյանի խոսքով, Գլեդիսի ձեռքբերումը հայ  
համայնքի համար հպարտության աղբյուր է:  
«Մենք նրան ամենայն բարիք ենք ցանկանում իր  
նոր դերում և անհամբերությամբ սպասում նրա  
հետ աշխատանքի շարունակությանը  
Ավստրալիայի հայերի խնդիրների լուծման  
համար», - ընդգծել է նա:

**Երաժշտական դպրոցի բացում  
Վրաստանի Ախալքալաքի շրջանի**

## Տուրքիա գյուղում ՀՀ Սփյուռքի նախարարության օգնությամբ

2011-04-06

Անցյալ տարվա դեկտեմբերի 24-ին ՀՀ Սփյուռքի նախարարությունը Տուրքիա գյուղին նվիրեց երաժշտական գործիքներ՝ դուդուկ, շվի, զուռնա, դիոլ և «Յամահա» մակնիշի սինթեզատոր:

Դպրոցը երաժշտական գործիքներով համալրելուց հետո, անցկացվում են առաջին երաժշտական դասարանի քսան աշակերտի նախնական լսումներ, իսկ հիմնական դասընթացները կսկսվեն Ապրիլի 7-ից: Կրթօջախի հանդիսավոր բացումը կլինի ավելի ուշ, որովհետև նախատեսվում է դպրոցում բացել դասարաններ մի շարք մասնագիտությունների գծով՝ գեղանկարչություն, քանդակագործություն, համակարգչային դիզայն և այլն:

Առանձին նամակով ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանին իր սրտի շնորհակալական խոսքն է ուղղել Ջավախքի հայտնի բանաստեղծ Գուրի Եթերը՝ «Ի խորոց սրտի՝ իմ օրհնությունն ու շնորհավորանքն եմ հղում Ձեզ՝ հայ կանանց մեկամսյա տոնի առթիվ: Տոն, որի սկիզբը աշխարհիկ է՝ Մարտի 8, իսկ վերջը՝ հոգևոր...: Այդ

ամենի մեջ մեծ խորհուրդ կա, ինչը հասու է Ձեզ:  
Դուք Ձեր ներդրումն ունեք այդ երկու տոների  
միավորելու գործում: Թո՛ղ այդ անձնականի և  
անանձնականի միջանցքում գտնվող միամսյա  
խորհրդի բացահայտումը՝ երջանկացնող  
զվարթություն պարզևի Ձեզ, թո՛ղ Ձեզնից բխող  
լույսը անսպառ լինի հանուն հայ ցեղի կնոջ  
մայրության ու գեղեցկության:

... Երանի Ձեզ, որ կարողանում եք օգտակար լինել  
մարդկանց.

... Երանի նրանց, որ կարողանում են գնահատել  
Ձեզ և Ձեր ջանքերը:

... Երանի ինձ, որ հայոց Սանդուխտի նմա քույրեր  
ունեմ»:



## Ռումինահայությունն այսուհետ առավել համակարգված կգործի ի շահ Հայաստանի եւ Արցախի

2011-04-05

Համայնքի հետ տեղում ծանոթանալու,  
գրասենյակի հիմնմանն առնչվող հարցերը  
կարգավորելու եւ Հիմնադրամի գործունեությունը  
համայնքին առավել բովանդակալից  
ներկայացնելու նպատակով մարտի 20-ին եռօրյա

աշխատանքային այցով Ռուսիինիա էր մեկնել «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրենի խորհրդական Հրաչ Հովհաննիսյանը: Հանդիպումների շարքը մեկնարկեց Բուխարեստի հայկական եկեղեցում մատուցված կիրակնօրյա պատարագով, որի ավարտին Տաթև Վարդապետ Հակոբյանը ներկայացրեց 'Հայաստան' հիմնադրամի համահայկական առաքելությունը եւ Հրաչ Հովհաննիսյանի այցելության նպատակը: Իր ողջույնի խոսքում պարոն Հովհաննիսյանը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար եւ նշեց, որ Ռուսիինիայի հայ համայնքի միասնականությունն առավել վառ կդրսեւորվի մայր հայրենիքի հետ կապերի ամրապնդմամբ եւ հայրենաշինության գործին իր ակտիվ մասնակցությամբ:

«2010-ին ռուսինահայերի փոքր համայնքն ավելի քան 14 հազար ԱՄՆ դոլարի նվիրատվություն կատարեց Հիմնադրամին: Գումարը կուղղվի 2011թ-ին իրականացվող մեր ծրագրերին: Ռուսիինիայում գրասենյակի հիմնումն այնտեղ բնակվող մեր հայրենակիցներին ոչ միայն կկապի հայրենիքի հետ, այլեւ հնարավորություն կտա

մասնակցել հայրենիքի բարգավաճման ու հզորացման գործին: Մենք ուժեղ ենք, երբ մեկտեղում ենք մեր ջանքերը մեկ ընդհանուր նպատակի շուրջ», - ասում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի տնօրեն Արա Վարդանյանը:

Կոնստանցիայի փոքրաթիվ համայնքը եւս ջերմ ընդունելության արժանացրեց Հիմնադրամի ներկայացուցչին: Հանգամանքների բերումով այստեղ հիմնված մեր հայրենակիցները, որոնցից շատերը 50-60-ական թվականներին էին վերջին անգամ եղել հայրենիքում, հուզված էին թե՛ հայաստանյան հյուրի այցելությունից, եւ թե՛ հայրենիքի մասին իրենց հիշողություններից: Համայնքի ղեկավար Ավետիս ա.քհն. Մանդալյանի խոսքով՝ Կոնստանցիայի նախկին սովար համայնքից այսօր շուրջ 200 հոգի է մնացել: Ավագ սերունդը գնալով պակասում է, իսկ երիտասարդները մեկնում են արտերկիր՝ աշխատելու կամ ուսում ստանալու: Կարելորելով հայրենիքի հետ կապերի ակտիվացումը՝ Տեր հայրը հույս հայտնեց, որ Կոնստանցիայի փոքրաթիվ համայնքն իր համեստ լուման կունենա՝ Հայաստան՝ հիմնադրամի առաջիկա ծրագրերում:

Նրա խոսքով՝ համայնքի ավագ ներկայացուցիչները եւ անձամբ ինքը քաջալերում են համայնքի անդամներին եկեղեցի հաճախել եւ ամեն գնով պահպանել իրենց լեզուն եւ ինքնությունը:

Այցելության ավարտին Հ.Հովհաննիսյանը հանդիպեց «Արարատ» շաբաթաթերթի եւ «Նոր կյանք» ամսաթերթի խմբագիրների հետ, ովքեր հանձն առան ամեն կերպ աջակցել Հիմնադրամի գործունեությունը լուսաբանող հաղորդագրությունների տարածմանը համայնքում: «Հայաստան» համահայկական հիմնադրամն արդեն իսկ աշխարհին ներկայանում է 18 երկրում գործող 21 տեղական մարմիններով, ասվում է հիմնադրամի հաղորդագրության մեջ:

---

## **Ապրիլի 24-ի նախաշեմին Թուրքիայի իշխանությունները զգուշանում են հայկական Սփյուռքի գործողություններից**

2011-04-05

«Վերջերս Թուրքիայի կողմից կազմակերպվող միջոցառումների վրա հայերի հարձակումների դեպքերը հաճախացել են: Մենք ակնկալում ենք,

որ այդ ուղղությամբ համապատասխան միջոցներ կձեռնարկվեն այդ երկրների իշխանությունների կողմից»,- ասել է Ունալը՝ նշելով վերջին նման դեպքերի մասին, որոնք, իբր, տեղ են գտել Բեյրութում և Փարիզում գրքի ցուցահանդեսի ժամանակ, հաղորդում է Անատոլիական գործակալությունը:



**Թուրքիայում**  
**Անատոլիայի հայերի դեմ**  
**պայքարի գաղտնի**  
**հետախուզությունն էր ստեղծվել**

2011-04-05

Այդ է հետևում WikiLeaks կայքի կողմից հրապարակված և թուրքական Taraf թերթում տպագրված դիվանագիտական հեռագրերից: Անկարայում ԱՄՆ դեսպանատան նախկին ռազմական քարտուղար Ռոբերտ Դեյչի դիվանագիտական հեռագիրն ուղարկվել է 2004 թվականի դեկտեմբերին և վերնագրված է «Հայացք թուրքական ռազմական հետախուզության աշխատանքին՝ մտավախություններ Իրաքի, PKK պատճառով, պառանոյա, հականատոլյան քարոզարշավ»:

Ինչպես հետևում է դիվանագիտական հեռագրից,

Դեյչը գրուցել է անանուն թուրքական աղբյուրի հետ, որը 12 տարի աշխատել է ռազմական հետախուզությունում: Այդ աղբյուրը ներկայացրել է JITEM անունը կրող գաղտնի կազմակերպության 40 աշխատակիցների հետ գրույցները:

Տեղեկատվության համաձայն, JITEM-ը ստեղծվել է հարավ-արևելյան Անատոլիայում «հայկական սեպարատիզմի» դեմ պայքարի համար: JITEM-ի աշխատակիցներին զարմացրել էր հայերի դեմ պայքարի հրամանը, քանի որ շատ հայեր փոխել են իրենց անուններն ու թաքցնում են էթնիկ ծագումը 1915 թվականի իրադարձություններից հետո: Հեռագրում նշվում էր, որ չնայած դրան, հայերի ներկայությունը հարավ-արևելյան Անատոլիայում անհանգստացնում է Թուրքիային, գրում է թուրքական Hurriyet Daily News-ը:



## Կալկաթայում նշվեց Հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման

### 190-ամյակը

2011-04-04

Բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի կրթական տնօրենը: Այնուհետև Մարդասիրականի պարախումբը ներկայացրեց մի գեղեցիկ հնդկական պար, որին հաջորդեց

կրթօջախի երգչախմբի ելույթը: Ապա 2010-2011 ուսումնական տարվա շրջանավարտներին հանձնվեց ճեմարանի անունը կրող ժամացույցներ, իսկ բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները պարգևատրվեցին գովասանագրերով և ստացան խրախուսական նվերներ:

Հանդիսության ընթացքում ցուցադրվեց Հնդկահայքի երևելիների և հայ-հնդկական հարաբերությունների մասին պատմող տեսանյութ: Իսկ հանդիսության բարձրակետն էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Կալկաթայում լույս տեսած «Հնդկահայք» երկյլեզու (հայերեն-անգլերեն) երկրորդ տարեգիրքը, որը ներկայացրեց գրքի հիմնադիր-հրատա-րակիչ, հնդկահայոց հոգևոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառա-վարիչ Հայր Խորեն Հովհաննիսյանը: «Հնդկահայք» 2010-ում խտացել են հնդկահայոց հոգևոր հովվության և Հնդկաստանում «կտոր մը Հայաստանի»՝ Հայոց մարդասիրական ճեմարանի անցուդարձը, մեր շնորհալի ուսանողների ուսումնական ու մարզական նվաճումները: Տարեգրքում տեղ են

գտել հնդկահայ համայնքի հարյուրամյակների պատմությունը լուսաբանող հոդվածներ, ինչպես նաև աշխարհի տարբեր ծագերից անդրանիկ հրատարակությունը գնահատող և արժևորող նամակներ, որոնք պարտավորեցնող էին և խթան «Հնդկահայք» 2010-ը կյանքի կոչելու գործում:  
(Հայր Խորեն)

Մշակութային մասի ավարտին ներկաները հյուրասիրվեցին հոբելյանական տորթով:

Ձեռնարկին ներկա էին ճեմարանի աշակերտությունը, ուսուցիչները, պաշտոնեությունը, Սուրբ Նազարեթ Մայր եկեղեցու վարչության անդամները, հա-մայնքի ներկայացուցիչներ և հյուրեր:

Հայոց մարդասիրական ճեմարանը հիմնադրվել է 1821 թվականի ապրիլի 2-ին` Աստվածատուր Մուրադխանյանի և Մնացական Վարդանյանի բարերարությամբ: Կրթօջախը Կալկաթայի երկրորդ ամենահին դպրոցն է:

Հանդիսությունը հարգանքի տուրք էր դպրոցի հիմնադիրների պայծառ հիշատակին:

---

# Հասարակություն



Ամենայն Հայոց  
Կաթողիկոսն իր  
գնահատանքն է հայտնել

## Հայ կանանց միջազգային միության անդամներին

2011-04-07

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ ՀՀ Սփյուռքի նախարարը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց միության նպատակը և գործունեությունը՝ ի գորացումն ազգային արժեքների, դրանում մեծապես կարևորելով եկեղեցի-պետություն, եկեղեցի-հասարակություն, եկեղեցի-ընտանիք հարաբերությունների ամրապնդումը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց միության անդամներին և շնորհավորեց նրանց առաջիկա տոնի առիթով՝ մաղթելով, որ հայ կինն իր լուսավոր կերպարով ու հոգու ջերմությամբ ամենուրեք գեղեցկացնի հայ կյանքը: «Փառապանծ կերպար է կերտել հայ կինը պատմության մեջ իր արիությամբ, նվիրումով և հավատարմությամբ ազգային-հոգևոր

արժեքներին: Ուրախ ենք, որ այսօր ևս նույն դերակատարությունը փառքով ու պատվով տանում է հայ կինը թե՞ Հայրենիքում և թե՞ Սփյուռքում», - նշեց Նորին Սրբությունը:


Անդրադառնալով Ավետման և Մայրության տոների խորհրդին՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ դրանք արտահայտությունն են այն ջերմ զգացումների և գիտակցության, որ հայ մարդն ունի հանդեպ հայ կինը, նրա կարևոր առաքելությանը ազգային կյանքում: Նորին Սրբությունը խոսեց նաև եկեղեցի-ընտանիք կարևոր կապի մասին՝ նշելով, որ Եկեղեցու, հոգևոր արժեքների հանդեպ ընտանիքի կնոջ և մոր կեցվածքով է մեծապես պայմանավորվում հասարակության մեջ բարեփոխումները դեպի բարին, աստվածօրհնյալ և աստվածահաճո կյանքը:

Միության անդամներն իրենց հերթին կարևորեցին Եկեղեցու կարևոր դերակատարությունը հայ ընտանիքի ամրության գործում, պատրաստակամություն հայտնեցին զորակցել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին տարբեր ծրագրերում:

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց  
Կաթողիկոսը պատասխանեց միության  
անդամների հարցերին՝ լուսաբանություններ  
տվեց հասարկությանը հուզող տարբեր  
խնդիրների առնչությամբ, հայտնում է Մբ  
Էջմիածնի մամլո դիվանը:

---

## Մշակույթ



### Երեւանում կբացվի Գլենդեյլի «Աթանյան» արվեստի կենտրոնի ցուցահանդեսը

2011-04-09

Սա Գլենդեյլի Աթանյան արվեստի կենտրոնի եւ  
Երեւանի Գեղագիտության ազգային կենտրոնի՝  
համատեղ նախագիծն է, որին պատրաստվում էին  
2010 թ. սեպտեմբերից: Նույն ցուցահանդեսը  
կբացվի ամռանը Լոս Անջելեսում: Այս առիթով  
«Աթանյան» արվեստի կենտրոնը հրատարակել է  
գունազարդ ալբոմ, որի մեջ զետեղված են բոլոր  
մասնակիցների ստեղծագործությունները:

«Աթանյան» արվեստի կենտրոնը ամեն տարի  
աչքի է ընկել բազմաթիվ մրցույթներում  
հաղթանակներով: 2011 թվականին ևս կենտրոնի

աշակերտները տարբեր մրցույթներում արձանագրեցին նոր հաջողություններ, արժանացան բարձրագույն պարգևների: Դրանց թվում է Ստեֆանի Գրիգորյանի կոմպոզիցիան, որը հարյուրավոր պատանեկան ստեղծագործություններից ընտրվել է տեղադրվել է բազմահազար տպաքանակ ունեցող «Sax Art» կատալոգի շապիկին: Ստեֆանիի «Ես սիրում եմ կապիկներին» աշխատանքը նախապես արժանացել էր «Sacura of America» յուղակավճանկարների մրցույթի մրցանակին, որից հետո «Sax Art»-ն ընտրել էր այդ գործն իր կատալոգի շապիկին տեղադրելու համար:

Գլենդեյլի քաղաքապետարանի Արվեստի եւ մշակույթի բաժնի «Մաքուր պահենք Գլենդեյլը» տարեկան մրցույթի 2011 թ. ֆինալիստներ դարձան կենտրոնի սաներ Առնելլա Քալանթարյանը եւ Տանյա Ռոստամին, իսկ «Աթանյան» արվեստի կենտրոնն արժանացավ հատուկ մրցանակի:

---

## **Ավիկ Մարության. Արևմտյան Հայաստանի բարբառները ոչնչացման եզրին է**

2011-04-07

Միաժամանակ, նա նշել է, որ 1915-ին Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությունը նախօրոք պլանավորված գործողություն էր, որի նպատակը ոչ միայն հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումն էր, այլ նաև ժողովրդի լիակատար ոչնչացումը: «Օսմանյան կայսրությունում կատարվածը կարելի է նաև դիտարկել որպես լեզվասպանություն», - ասել է նա և հավելել, որ Հայոց ցեղասպանությունից հետո հետագա տարիներին Թուրքիան ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները, այդ թվում փոխել է գյուղերի, լճերի տեղանունները, որպեսզի հայերից ոչ մի հետք չմնա: Նրա խոսքերով, բարբառագիտական քարտեզ ստեղծելու դեպքում հնարավոր կլինի Թուրքիային կանչել Հաագայի դատարան:

Անդրադառնալով գրական լեզվի ներկա որակին՝ Մարությանն ասել է, որ այն այսօր սարսափելի վիճակում է: Նրա խոսքերով, մասնավորապես, գրական լեզուն աղավաղվում է հայկական հեռուստաշոունների և սերիալների միջոցով: Այդ առումով նա նշել է, որ այդ հարցը պետական մոտեցում է պահանջում:

---



**Էմմիի Եվրատեսիլյան  
փրոմո-արշավը հազեցած  
է, նա կայցելի Կիև,  
Քիշնև, Նիդեռլանդներ, Աթենք և  
Վարշավա**

2011-04-04

Հայաստանը Եվրատեսիլ 2011-ին կներկայացնի երգչուհի Էմմին, ով ելույթ կունենա «Boom-Boom» երգով (երաժշտություն՝ Apricota խմբի, բառերը՝ Սոսի Խանիկյանի, գործիքավորումը՝ Արա Թորոսյանի): Այս երգն ընտրվել էր մարտի 5-ին Հանրային հեռուստաընկերության եթերում SMS քվեարկության և պրոֆեսիոնալ ժյուրիի որոշմամբ՝ 50/50 հարաբերությամբ: Էմմին ելույթ կունենա մայիսի 10-ին:

Այս տարի Դյուսելդորֆում կայանալիք Եվրատեսիլ 2011-ին կմասնակցի 43 երկրի ներկայացուցիչ: Մասնակից երկրներն արդեն ընտրել են իրենց երգիչ-երգչուհի ներկայացուցիչներին: Ինչպես հայտնում է մրցույթի պաշտոնական կայքը, Եվրոպական հեռարձակողների միությունը արդեն ստացել է բոլոր մասնակիցների երգերը:

Եվրատեսիլ 2010-ին մասնակցել էր 39 երկիր:

## Հայտարարություններ



ՀՀ սփյուռքի  
նախարարության «Հայ  
կնոջ դերը Սփյուռքում»  
կլոր սեղան

2011-04-06

Կլոր սեղանը կվարի ՀՀ սփյուռքի նախարար  
Հրանուշ Հակոբյանը:

Կքննարկվեն «Հայրենադարձությունը և հայ կինը»,  
«Կինը ավանդական և արդի հասարակության մեջ  
Հայաստանում և Սփյուռքում» թեմաները:

Զեկույցներ կներկայացնեն ՀՀ ԳԱԱ  
հնագիտության և ազգագրության ինստիտուտից՝  
պ.գ.թ. Արմենուհի Ստեփանյանը և պ.գ.թ.  
Սվետլանա Պողոսյանը:

Կլոր սեղանին կմասնակցեն ԵՊՀ  
սփյուռքագիտության ամբիոնի վարիչ Յուրա  
Ավետիսյանը, ՀՀ ազգային արխիվի տնօրեն  
Ամատունի Վիրաբյանը, ՀՀ ազգային արխիվի

փոխտնօրեն Էդգար Հովհաննիսյանը, ԳԱԱ Պատմության ինստիտուտից՝ պ.գ.դ. Էդուարդ Մելքոնյանը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան պ.գ.դ., Էդիկ Մինասյանը, պատմաբան Գեորգ Յազրճեանը, ՀՀ սփյուռքի նախարարության համահայկական ծրագրերի վարչության գիտակրթական ծրագրերի բաժնի պետ Սիրվարդ Համբարյանը, Համազգային հայ կրթական, մշակութային միության Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Լիլիթ Գալստյանը եւ այլք: